

ՀՐԱՋԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻԾ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻՆ

Հրաքարակող՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍՍԵԱՆ

4.

Շուշի, 1903 զեկտ. 30

Գերապատիւ Հայր,

Թէ՛ք Հանդէսի թղթակցութեանց շարքին մէջ ինձմէ խնդրած էիք կա՛մ Ողիա Բաղնաշի պատմութիւնը՝ և կա՛մ Եւրոպական փոխառեալ բառերը՝, սակայն այնպէ՛ս պատահեցաւ որ մ'չ առաջինը և ո'չ երկրորդը ուղարկեմ. այլ բոլորովին նոր աշխատութիւն մը, որուն կարծեմ անհամբեր կը սպասէ բանասիրութիւնը, մանաւանդ Վիեննայի Հայոց [այսպէ՛ս] միտարանութիւնը: Յիշեալ աշխատութիւնն է «Եզնիկի նորագիւտ ձեռագրին քննադատութիւնն ու համեմատութիւնը», զոր կարծեմ խմբագրութիւնը աւելի օրինով պիտի ընդունէ քան միւս երկուքը: Աշխատութիւնը կազմած ենք ես և էջմիածնի Գալուստ սարկաւազը (Միտրան):

Թէ՛ Գալուստ սարկաւազը և թէ՛ նուաստ ջերմագին կը խնդրենք որ հաճիք, ինչպէս նախորդ երկու աշխատութեանց համար խոստացած էիք, մեր սոյն քննութիւնը Հանդէսիդ մէջ հրատարակելէ յետոյ նաև որոտապել, ինչքան որ ուզէք: (Միայն մի քանի օրինակ ինձ և Միտրանին բաժին հանելով): Հատորը կրնայ շատ լաւ մաս կազմել Ձեր Ազգային Մատենադարանին, թէ՛ նիւթով և թէ՛ քանակով: — Եթէ դժբախտաբար պատահի որ պարագաները թոյլ չտան արտատպութիւն, այն մաս

և համաձայնութեամբ Եպիսկոպոսաց վիճակին՝ եղին յԱթոռն Հայրապետական զՏէր Սիմէոն Արքեպս. Սերաստացի՝ 'ի Կաթողիկոս ամենայն Հայոց 'ի Սիս Կիլիկիոյ (ՌՁԻ = 1635, Մայիս 12), Յաւուրս յայսոսիկ Արքայն Տաճկաց Սուլթան Մուրատ եկն 'ի Մայրաքաղաքս Սերաստի, յաւուր Գշ. և կեցեալ յայսր աւուրս եօթնեասն՝ գնաց 'ի Պարսս 'ի պատեւազմ: Յայնժամ Ներսէս Վրդպտ.՝ն Սեբաստացի՝ այր վսեմ և հանճարեղ՝ որ և ապա Կաթողիկոս Սոյր բարեպատենաւթ համարեալ, ժողովեաց առ ինքն զԱռաջնորդ վանօրէից նահանգիս՝ Անդրէաս Եպս.՝ Ս. Նշանի, Նիկողայոս Եպս.՝ Ս. Հրեշտակապետի, Յովնանէս Եպս.՝ Ս. Անապատի, Մկրտիչ Եպս.՝ Ս. Գեորգայ (Դեռաց գիւղի), Յովնանէս Եպս.՝ Ս. Խնդրակատարու, ընդ որս և զմեծամեծս Ազգին մերոյ, զՔահանայս և զիշխանս և

խորհուրդ արարեալ միաբան հաւանութեամբ, գիր աղերսանաց մատուցին առ Արքայն և խնդրեցին զհրաման զի նորոգեալ շինեցեն զփոքրիկ մատուռ Սըրոյն Սարգսի: Եւ Տէր քաղցրացոյց ըզսիրտ թագաւորին 'ի վերայ տառապեալ Ազգիս մերոյ և շնորհեաց զհրամանագրին, զոր ընկալեալ Մեծի Վարդապետին Ներսիսի բազմաւ խնդութեամբ՝ սկսաւ 'ի պատրաստութիւն շինութեան, զոր և մեծագոյն աշխատութեամբ և բազում տառապակրութեամբ շինեալ աւարտեաց ըզՏաճարն, քարաշէն ամրակառոյց, կամարազարդ յօրինուածովք և յաւարա շինուածոյն գեներամբ խոյոց և զուարակաց՝ մեծահանդէս նաւակատիւ արարեալ ուրախացոյց զամենեւին, զմեծամեծս և զփոքունս՝ 'ի փառս Աստուծոյ և 'ի պատիւ Սրբոյն Սարգսի Զօրավարին (ՌՁԵ = 1636, Կոնդակ, Յիշակ.):

(Շարունակելի՛ 7)

ՏԻՐԱՆ Ս. ՔԻՐԻՇԵԱՆ

մանակ խնդրեմ որ հաճիք պահել տեսարակը, որպէսզի ճանապարհածախսը ուղարկելով ետ վերադարձնելու ձանձրութիւնը տամ ձեզ⁹։

Հ. Գ. Մէնէվիշեանի Արդի լեզուագիտութիւնը⁴ ստացած եմ, ինչպէս նաև Հանդէսի թիւը։ Բայց մի՛ զարմանա՛ք եթէ Արդի լեզուագիտութեան մատենախօսականը չեմ ուղարկած։ Ինչպէս գիտե՛ք, Հ. Մէնէվիշեան կը պատկանի ճշին քերական⁵ կոչուած լեզուաբաններուն, միշնդեւ նուազաւոր հակուած է ճնոր քերական⁶ կոչուած լեզուաբաններուն։ Գեր, հօր պատրաստած գիրքը այնպէս պիտի լինէր որ այս ու այն կուսակցութիւնէն ըստ կարելւոյն հեռու մնալով՝ աշխատէր որքան կարելի է երեսոյթները և այլեւայլ ուսումնականաց տուած մեկնութիւնները լոկ իբր պատմաբան պատմէր։ Բայց այդպէս չէ եղած։ Հ. Մէնէվիշեան առիթ չ'փախցներ վիճելու Հիւպըմանի⁷, Պրուկմանի⁸ և այլ աշխարհաճախ լեզուաբաններու հետ։ Այնպէս որ գրուածքին մի բաւական մասը վիճարարութիւն է, և աւելի ճառական գրուածք։ Եթէ ինձ տրուէր մատենախօսական կազմել, ես ալ նմանապէս վիճարարութեանց մէջ պիտի իյնայի, որմէ որքան կարելի է կ'աշխատիմ հեռու մնալ։ Բացի այն իմ մատենախօսականս պատուած արդիւնքէն հեռու, դժգոհութեան առիթ պիտի տար՝ — Բայց որովհետև ես ինքս արդէն կ'ուզէի նոյն գրքէն օրինակ մը ստանալ, շուտով գիւնը կ'ուղարկեմ։

Այս տեղ մէկ երկու հին գրքեր տեսայ բարեկամի մը քով։

1. Ջորա աւեսաւանի, ապուած «Վէնէտիկ», ՌՃԼՅ թուին, ունի 430 էջ. ճիշտ նոյն է ինչ որ Ջորբրանէլեանի մատենագիտութեան⁹ մէջ, էջ 76, երկրորդ տպագրութիւն կը կոչուի։

2. Շարակուն¹⁰, թուի տիպ էջմիածնայ. երեսը կորսուած է. միակ հետքը հետեւեալն է. էջ 893, կայ յիշատակարան, աւր յիշուած քոնի մը անունները կրնան գիրքը որոշել։ Այսպէս նոյն էջ տակէն հաշուած տող 8 կը կարդանք «չալիքեանց»։ Միւս տողը «Միքայէլեան»։ մի տող յետոյ «Բարեպաշտունի Զ...», մնացեալը պատուած է։

3. Բառարան դրաբուրե աւիս, Յովսէփ Վ. Արցախեցեայ, ապ. Շուշի (Ջորբ. Մատ. էջ 100, կը յիշէ զայս, բայց սխալ է գրած ապագրութեան թիւը 1730, որ պիտի լինի 1830)։

4. Նոր Կսակաւան, Վենետիկ, 1789, ըստ Ջորբրանէլեան Մատենագ. էջ 504, Բ. տպ.։

Խնդրեմ այս գրքերը ստուգեցէք (մանաւանդ Շարակունը թէ ո՞ր թիւէն է) և յայտնեցէք ինձ թէ կ'ո՞ր Ձեր գրադարանին մէջ. հակառակ պարագային՝ «թէ ուզէք, կ'աշխատիմ ձեռք ձգել Ձեր մատենադարանին համար»։ Թերևս կարելի լինի Ձեր տպարանը ապուած սերիչ գրքերով փոխանակել։

Այսօր ուղարկում եղնիկիս¹¹ հետ կցած եմ նաև էջմիածնի ձեռագրատան պատկանող ձեռագրի մը ճիշտ ընդօրինակութիւնը. յիշեալը պատրաստուած էր մեր Նոր Վկայի¹² համար։ Բայց որովհետև վանքին¹³ անյարմար էր տպել յիշեալ գրութիւնը, աւր բաւական հայհոյանքներ կ'ուն լուսաւորչական հոգեւորականութեան, ուստի օտարականաց պահել։ Բայց որովհետև այլ ևս մեզ պէտք չէ այն, ուստի մտածեցի թէ կարող է Ձեզ պէտք դալ և ուղարկեցի վանքիդ մատենադարանին իբր նուէր։ Արարէք որպէս և կ'ամիք։

Կը վերջնացնեմ նամակս խնդրելով որ ընդունիք իմ անկեղծ յարգանքներս, որոնց կը կցեմ նաև իմ շնորհակալութիւններս առթիւ տմանորի։ Նոյնը խնդրեմ մատուցէք վեր. վեր. Հ. Հ. Տաշեանի, Գալէմբարեանի և այլ ծանօթից և բարեկամաց, մանաւանդ Գեր. Հ. Բ. Պիլէզիկեանին։

Ձերդ

Հ. Յ. ԱՃԱՌԵԱՆ

¹ Տե՛ս նա՛մ. Յ. Լոյս և տեսէ՛լ ԱՊարատո, Վաղարշապատ, 1908-1909 և առանձնատիպ, 54 էջ, ապա Վիեննա, 1930:

² ՀԱ, 1947-1950:

³ Դա է Քննութիւն եւ համեմատութիւն եզկկայ ճորագիւս ձեռագրից, Վիեննա, 1904 (Աղգ. մատ. ԽՃ, է-104 էջ) և Երևան, 1976 (նոր ուղղագրութեամբ) Հր. Անառեանի Վաղարշապատի ուսումնասիրութիւններ, էջ 118-200, ծանօթագրութիւնները՝ Ա. Մադոյեանի, որը չի կարողացել յայտնաբերել, որ Ան-ը ձեռքում չի ունեցել բուն 1826ի Վեյզի աղանդացիը:

⁴ Հ. Գ. Մենէվիչեան, Աղղի լեզուագիտութիւնը, նախ՝ ՀԱ, 1890-1901, ապա՝ առանձին:

⁵ Հիւբսման (Հայերիխ Էեարիշ Հիւբսման), 1848-1908, գերմանացի հայագէտ և իրանագէտ ու բանասէր. 1875ին Վայերէնի տեղը հնդկերոգական լեզուների մէջ յօդուածով վերջնականապէս փաստեց, որ հայերէնը (գրաբարը) իրանական չէ, այլ՝ հնդկերոգական մի առանձին լեզուական ճիւղ:

⁶ Բուդման (Կարլ. Brugmann, Karl), 1849-1919, գերմանացի լեզուաբան, հնդկերոգագէտ, երիտեքրականի լեզուական դպրոցի հիմնադիրներից. Վեյերշապատի լեզուների համեմատական քերականութեան ուսումնասիրութիւններ, Վիեննա, 1877-1901, Ս. Ղազարի Մխիթարեան, հայ հին գրականութեան պատմութեան մասնագէտ, մատենագէտ, Թարգմանիչ. նրա Վայկական մատենագիտութիւնը (1865-1883) Լոյս և տեսէ՛լ 1813ին. դրա հիման վրայ Հ. Արսէն Ղազիկեանը (1870-1932) պատրաստեց է իր Վայկական ճոր մատենագիտութիւնը եւ համեմատական հայ կեանքի գործը (1872-1905), որը 1909-1914 թթ. տե՛ս հրատարակութիւնն ընդհատուել է նուիրիան մանուկով՝ 1915 թ. ձեռագրի շաղակապութեան կորստի հետեւանքով:

[վաճառ]

⁷ Ան-ը կեանքի ընթացքում միշտ հետեւել է այս զգուշաւոր սկզբունքին:

⁸ Գարեգին Զարեանցեան, 1827-1901, Ս. Ղազարի Մխիթարեան, հայ հին գրականութեան պատմութեան մասնագէտ, մատենագէտ, Թարգմանիչ. նրա Վայկական մատենագիտութիւնը (1865-1883) Լոյս և տեսէ՛լ 1813ին. դրա հիման վրայ Հ. Արսէն Ղազիկեանը (1870-1932) պատրաստեց է իր Վայկական ճոր մատենագիտութիւնը եւ համեմատական հայ կեանքի գործը (1872-1905), որը 1909-1914 թթ. տե՛ս հրատարակութիւնն ընդհատուել է նուիրիան մանուկով՝ 1915 թ. ձեռագրի շաղակապութեան կորստի հետեւանքով:

[վաճառ]

⁹ Շարական կամ Շարականց, հայ աղագային (և կաթողիկէ) եկեղեցու շարականների ժողով. Վեյերշապատի հետ, այսինքն՝ Վեյերշապատի ձեռագրերի ճանաչատուութիւնն ու համեմատութիւնը, ինչպէս այս նամակի սկզբում:

¹⁰ Նոր վկայք. տե՛ս նամակ 3, ծան. 8:

¹¹ Վանքեր, այն է Նշմանների վանքի, որի ապարանում Լոյս և տեսէ՛լ Վայոց ճոր վկաները գրեց:

5.

Շուշի, 1904, Ապրիլ 2.

Գերազատել Հայր,

Հ. Թովմ. Կէտիկեան,

Պատիւ ունիմ նամակիս հետ ուղարկելու Յովսէփ Վ. Արցախեցու թանաքանը՝ ապահովել, որուն ստացումը խնդրեմ հաճիք ծանուցանել: Այդ ուղարկութեան փոխարէն կը համարեմ Հ. Մենէվիչեանի Աղղի լեզուագիտութիւնը, և երկրորդ՝ Հ. Տաշեանի Ալկաթի վր հայ հնագրութեան, գոր խնդրեմ բարեհաճիք ուղարկել իմ հասցէիս. շնորհակալ կ'ըլլամ եթէ նոյնին կցէք նաև Վիեննայի Վոնուցի մէջ ապուած գրոց վերջին գրացուցակը:

Շնորհակալութիւն եզկկայ՝ խոտացուած օրինակաց համար:

Մեր Նոր Վկայի ընդարձակը վերջացաւ. յուսով եմ ստացած կը լինիք արդէն կամ կը ստանաք շուտով: Պիտի նկատեք հոն թէ Յուսաջարանը կը սկսի Բ. գըլ-խով. առաջինը (որ մօտ 100 երես բան էր) կարուած է գրաքննութեան կողմէ և պիտի ապուի Արատասանի մէջ, Թերեւ նոյնիսկ Ձեր վանդաց մէջ:

Հանգէսի օրինակները սկսած են շատ անկանոն դալ. կորստած է 1903 Դեկտ., 1904 Մարտ համարները, ինչպէս և 1904 Յունիւլ.-Փետր. Թուի կողմ (միջինները ամբողջ են): Կ'երեւայ թէ պէտք պիտի ըլլայ խնդրել որ այսուհետև Ձեր ուղարկած օրինակները ապահովեալ ըլլան. ասոր համար խնդրեմ յայտնել թէ տարիկան ի՛նչ գումար պէտք է աւելցնել բաժանորդագնոյն վրայ:

Ուրախ պիտի լինէի նոյնպէս եթէ Հանգէսի մէկ կողի վրայ յայտնէք թէ Հ. Տաշեանի Հայագիտութիւնը՝ Երբ Լոյս կը տեսնէ, ծաւալի է որ Մեւիք Ս. Դաւիթ Բէկի